«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

31 Մայիսի 2023, N 7 - 3

056201.02.6 «ԿԻՐԱՌԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ», 056802.01.6 «ԱԿՏՈՒԱՐԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ» ԵՎ 061104.01.6 «ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱՆԻՑ ՍԿՍԱԾ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լսելով և քննարկելով «Տնտեսագիտական կրթության և հետազոտությունների աջակցման կենտրոն» հիմնադրամի ֆինանսավորմամբ ձևավորված «ՀՊՏՀ» ՊՈԱԿ և ՀՀ տարբեր համալսարանների (ԵՊՀ, ՀԱՀ, ՀԱՊՀ) ակադեմիական կազմի ներկայացուցիչներից, ՀՀ ԿԲ և մասնավոր հատվածի ընկերությունների մասնագետներից կազմված մասնագիտական փորձագիտական խմբերի կողմից մշակված բակալավրիական ուսուցման՝ 056201.02.6 «Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն», 056802.01.6 «Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա» և 061104.01.6 «Տեղեկատվական համակարգեր» մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնական պլանները հաստատելու մասին հարցը, **արձանագրելով,** որ կրթական ծրագրերը և դրանց ուսումնական պլանները մշակվել են «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում մասնագիտական կրթական ծրագրերի մշակման, գնահատման և մշտադիտարկման կարգի» դրույթների պահպանմամբ, փորձաքննության արդյունքում արժանացել են որակի ապահովման բաժնի դրական եզրակացությանը, քննարկվել են կրթական ծրագրերը սպասարկող առանցքային ամբիոնների հետ, միաձայն կողմ քվեարկությամբ հաստատվել են համապատասխանաբար՝ վիճակագրության ամբիոնի 2023 թվականի մայիսի 18-ի, տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի 2023 թվականի մայիսի 18-ի և տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի 2023 թվականի մայիսի 18-ի նիստերում, հաստատման են երաշխավորվել գիտական խորհրդին կից ուսումնամեթոդական հանձնաժողովի մայիսի 19-ի թիվ 2 նիստում՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է.**

1. Հաստատել բակալավրիական ուսուցման 056201.02.6 «Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն» մասնագիտության կրթական ծրագիրը և դրա ուսումնական պլանը:

2. Դիմել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն՝ 056201.01.6 «Վիճակագրություն» մասնագիտության լիցենզիան դադարեցնելու և 056201.02.6 «Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն» մասնագիտությամբ լիցենզիա ստանալու հարցով՝ պահպանելով գործող լիցենզիայի կրթաձևերը և կրթական տեղերը:
3. Հաստատել բակալավրիական ուսուցման 056802.01.6 «Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա» մասնագիտության կրթական ծրագրի նոր ուսումնական պլանը:
4. Հաստատել բակալավրիական ուսուցման 061104.01.6 «Տեղեկատվական համակարգեր» մասնագիտության կրթական ծրագրի նոր ուսումնական պլանը:
5. **2023-2024** ուսումնական տարում 056802.01.6 «Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա» և 061104.01.6 «Տեղեկատվական համակարգեր» մասնագիտությունների առկա և հեռակա ուսուցմամբ բակալավրիատ ընդունված ուսանողների ուսուցումն իրականացնել և ուսումնական գործընթացը կազմակերպել նոր ուսումնական պլաններով:
6. **2024-2025** ուսումնական տարվանից սկսած 056201.01.6 «Վիճակագրություն» մասնագիտության փոխարեն առկա և հեռակա ուսուցմամբ բակալավրիատի ընդունելությունն իրականացնել և ուսումնական գործընթացը կազմակերպել 056201.02.6 «Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն» մասնագիտության ուսումնական պլանով:
7. Ներառյալ մինչև 2022-2023 ուսումնական տարին 056802.01.6 «Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա» և 061104.01.6 «Տեղեկատվական համակարգեր» մասնագիտությունների առկա և հեռակա ուսուցմամբ բակալավրիատ ընդունված ուսանողների ուսուցումը շարունակել ընդունելության պահի դրությամբ հաստատված և գործած ուսումնական պլաններով:
8. Հանձնարարել ուսումնական բաժնին՝ UMS համակարգում **2023-2024** ուսումնական տարվա համար մինչև 2023 թվականի հունիսի 20-ը 056802.01.6 «Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա» և 061104.01.6 «Տեղեկատվական համակարգեր» մասնագիտությունների առկա և հեռակա ուսուցմամբ բակալավրիատի ուսուցման կազմակերպման համար ձևավորել սույն որոշմամբ հաստատված ուսումնական պլանների համապատասխան մոդուլները:
9. Հանձնարարել մասնագիտական կրթական ծրագիրը սպասարկող ամբիոնի վարիչներին՝ 2023-2024 թվականներին ամբիոնների ակադեմիական կազմի ներկայացուցիչների վերապատրաստման և ատեստավորման կարգով սահմանված աշխատանքները պլանավորել և կազմակերպել ելնելով նոր ուսումնական պլաններում ներառված դասընթացների որակյալ սպասարկումն իրականացնելու անհրաժեշտությունից և արտաքին փորձագետների կողմից տրամադրված խորհրդատվությունից՝ մինչև 2023 թվականի սեպտեմբերի 30-ը ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի և արտաքին կապերի դեպարտամենտի հետ

հստակեցնելով վերապատրաստվող ակադեմիական կազմի ցանկը և վերապատրաստման մասնագիտական մոդուլները:

10. Հանձնարարել վիճակագրության, տնտեսամաթեմատիկական մեթոդների, տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնների վարիչներին՝ մասնագիտական գրականության ձեռքբերման աշխատանքները պլանավորել և կազմակերպել ելնելով նոր ուսումնական պլաններում ներառված դասընթացների որակյալ սպասարկումն իրականացնելու անհրաժեշտությունից և արտաքին փորձագետների կողմից տրամադրված խորհրդատվությունից՝ մինչև 2023 թվականի սեպտեմբերի 30-ը գիտության գծով պրոռեկտորի և վարչատնտեսական և կազմակերպական դեպարտամենտի հետ հստակեցնելով ձեռք բերվող մասնագիտական ցանկը և անհրաժեշտ քանակությունը:
11. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Վ.Գրիգորյանին:
12. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

2023 թ. մայիսի 31
Երևան